ձմերտության չափով և պատկերացման ուժով:

Մարքսը, Ենգելսը, Լենինը և Ստալինը գրողների և
գրականության մասին: Գրական ստեղծագործությունների

ուսումնասիրման և գնահատման չափանիշը մարքսիզմի-լենինիզմի կլասիկների մոտ:

5. Գրական ստեղծագործությունը վորպես ամբողջություն

Գաղափարը զեղարվեստական ստեղծագործության կառուցվածքի մասին: Բովանդակության և ձեր միասնությունը զրականության մեջ: Գաղափարա - թեմատիկական մատերիալի փոխանցումը խարակտերների: Կոմպոզիցիան, սյուժենը, կոստանափորը, վորպես պատկերային ձեր ստեղծման միջոցները: Նրանց հիմնավորումը զրվածքի պատկերներով: Գրական ստեղծագործությունը, վորպես զրական սրբոցների միավոր: Նրա զարգացման ուղղվածությունը, նրա բոլոր տարրերի փոխադարձ կապը: Գրական ստեղծագործության վերլուծության մեթոդիկան:

6. Գեղարվեստական ստեղծագործության քենան յեվ գաղափարը

Թեման՝ կենսական նյութ, զրված զրվածքի հիմքում: Թեմայի և գաղափարի միասնությունը, գեղարվեստական զրվածքի իդեան: Գեղարվեստական յերկի պրոբլեմը՝ զրված կենսական վորոշ նյութի վրա: Մատեղացումը և գաղափարը: Գրվածքի զաղափարը և զաղափարական բովանդակությունը: Խոշոր զրական ստեղծագործությունների զաղափարական բովանդակության բազմակողմանիությունը և բարդությունը: Գեղարվեստական յերկի զաղափարի կոնկրետապատմական բնույթը: Խորհրդային զրականության լայն թեմատիկական հնարավորությունները և բարձր զաղափարականությունը:

7. Կ ռ մ պ ռ զ ի ց ի ա ն

Գրական յերկի կոմպոզիցիան՝ զրվածքի կառուցվածքը, նրա բոլոր առանձին մասերը մի որգանական միասնության մեջ: Իրականության յերեսույթների փոխհարաբերակցությունների արտացոլումը կոմպոզիցիայի մեջ՝ ըստ հեղինակի ըմբռնման:

Կոմպոզիցիան, վորպես զեղարվեստական յերկի ելեմենտների կազմավորման ընդհանուր ձև: Սյուժեաը վորպես եպիքական, լիրիկա-եպիքական և զրամատիքական յերկերի կազմավորման մասնակի ձև: Սյուժեաը վորպես կյանքի տիպիքական հանգամանքներն արտացոլող զեղարվերի սիստեմ: Սյուժեաը վորպես խարակաները պատկերելու միջոց: Սյուժեաի պատմականությունը, վորպես խորականությունը: Սյուժեաի ֆորմալիստական մեկնարանությունը, վորպես

յերկի զեղարվերի տրամարանական սխեմա: Սյուժեաի Գորկու տված բնորոշման մեթոդուրիական նշանակությունը՝ և մարդկանց փոխազարձ կապի, հակասության, համակրանքի, հակակրանքի և առհասարակ փոխազարձ հարաբերությունների, այս կամ այն խարակտերի առման և կազմավորման (Գորկի)՝ սյուժեաը: Սյուժեաի տարրերը՝ եքսպոզիցիա, քակտումն, գործողության դարձացումը, կուլմինացիա, հանգույց, եպիլոգ: Լիրիքական շեղումներ: Ներածական եպիգոնները: Գեղարվեստական զարդավորում: Ֆարուկան և նրա հարաբերությունը սյուժեաին. Փաբուլայի զանազան բնորոշումները գոյություն ունեցող գրականության մեջ:

8. Գեղարվեստական գրականության լեզուն

Մարքսը լեզվի՝ վորպես «մարդու իրական զիտակցության» մասին: Լենինը լեզվի՝ վորպես մարդկային հաղորդակցման միջոցի՝ մասին: Գեղարվեստական զրականության լեզվի տիպականացնող նշանակությունը: Լեզվի վոճայնությունը՝ կյանքի զանազան բնագավառների զանազան լեզվական վոճերի արտացոլումը զրական լեզվի մեջ:

Գեղարվեստական զրականության լեզվի անհատական բնույթը՝ կենդանի խոսքի ձևերի ու հատկությունների պահպանումը նրա մեջ:

Լեզվի շերտավորումը, նրա կապը կոնկրետ խարակությունների հետ: Հեղինակի լեզվի գերը հասարակության լեզվական կուլտուրայի զարգացման մեջ: Պերսոնաժների լեզուն և հեղինակի լեզուն: Բանաստեղծական լեքսիկական հնարավորությունները՝ ժամանակակից զրական լեզուն, հնարանություններ, նորաբանություններ, ուսարաբանություններ, բարբառաբանություններ: Նկարագրական միջոցները՝ եպիտիտ, համեմատություն, փոխարերություններ (զանազանացում, լիտուտա, մետաֆորա, մետոնիմիա, սենակղուխա): Բանաստեղծական շարահյուսությունը և նրա հարաբերությունն արձակին: Կետազրության նշանակությունը զեղարվեստական յերկում: Լեզվական ձևերի բովանդակալից իմաստը գրականության մեջ:

9. Տ ա ղ ա շ փ ո ւ թ յ ո ւ ն

Զափածու և արձակ: Բանաստեղծության հուզական հագեցվածությունը: Ռիթմ: Ռիթմը նախնական պոեզիայում: Ռիթմը և աշխատանքը: Ռիթմի իդեոլոգիական նշանակությունը: Ինտո-

նացիան՝ ոիթմի բովանդակալից հիմք: Վոտանավորի տողը: Վոտք: Դադար: Ցեղուրա: Տողագարձ: Վոտանավորի սիստեմը: Թանակական և վորակական տաղաչափություն: Անտիկ պատմական տաղաչափությունը: Անտիկ տաղաչափության տերմինուգիշի յուրացումը նորագույն տաղաչափության մեջ: Այդ տերմինուգիշի վոփոխությունը: Վոտանավորի սիստեմը ոռւսական պոեզիայի պատմության մեջ: Ժողովրդական բանաստեղծություն: Վանկային, վանկաշշտավոր, շեշտավոր վոտանավոր: Խուսական վանկա ~ շեշտավոր բանաստեղծության հիմնական չափերը՝ յամբ, քորեյ, դակտիլ, ամֆիբրաքոս, անապեստ: Հանգ: Հանգի տեսակները՝ արական, իրական, դակտիլային, գերգակտիւլային: Հանգի կրմպողիցիոն նշանակությունը: Հանգավորման յեղանակները՝ միջանկյալ, խաչաձևող, պարփակող և այլն: Տուն: Աղատ բանաստեղծություն: Անհանգ բանաստեղծություն:

Զայնագրություն: Հնչյունի նշանակությունը բանաստեղծական լեզվի մեջ: Նմանաձայնություն: Արտահայտության ուժեղացումը, վորպես բանաստեղծական լեզվի հնչյունային կազմավորման հիմնական իմաստ: Ալիտերացիա և ասոնանս: Հնչյունական անափորա, եպիֆորա, կցորդ, ող և այլն: Բանաստեղծության հնչյունական կազմավորման ոիթմաշինտոնացիոն նշանակությունը:

10. Մերոդ, վոճ, գրական հոսանք

Գեղարվեստական մեթոդը աշխարհի «գեղարվեստական յուրացման» սկզբունք, վորը պայմանափորում և տվյալ ստեղծագործության կամ հոսանքի մեջ իրականության յերեսույթների պատկերավոր ընդհանրացման բնույթը: Խելիփողմը և ոռմանտիզմը, վորպես հիմնական մեթոդներ նախասոցիալիստական գրականության մեջ, վորպես իրականության գեղարվեստական արտացոլման և այդ իրականության գնահատման տարբեր տիպեր: Իրատիքական յուրահատկություններով՝ իրականության արտացոլումը ոեալիստական դրականության մեջ. վոչ թե իրականի, այլ կամեցածի պատկերումը ոռմանտիքական գրականության մեջ: Հաստատվող կյանքի առանձին կողմերի իդեալականացումը ոռմանտիզմի մեջ: Առաջադիմական և հետադիմական ոռմանտիզմ: Հեղինակի մեթոդի կախվածությունը նրա աշխարհայացքից: Երանց միասնությունը: Հակասության հնարավորությունը աշխարհայացքի և մեթոդի միջև (Բաղզակ, Գոգոլ և այլն): Հիշված մեթոդների տարբեր դրսերումները տարբեր ժամանակների, ժողովրդների ու դասակարգերի գրականության մեջ:

Քննադատական ոեալիզմը՝ անմարդկայնության և խարեյության, շահագործողական հասարակական հարաբերությունների պայմաններում մարդու ձնշման տարբեր դրսերումների— ձմքարիտ պատկերումը անցյալի խոշոր գրողների կողմից (Պուշկին, Լ. Տոլստոյ, Շչելցին, Բալլակ և այլն): Առաջադիմական ոռմանտիզմը՝ խոշոր հիմնակների պատկերացումը ապագա բանական, ազատ և ստեղծագործական կյանքի պատկերների մասին և կովկի կոչ այդ կյանքի համար (յերիտասարդ Պուշկինը, Լերմոնտովը և այլն):

Սոցիալիստական ոեալիզմը, վորպես բանաստեղծական արվեստի զարգացման բարձր աստիճան:

Սոցիալիստական ոեալիզմի հիմնական գծերը՝ իրականության արտացոլումը նրա առաջատար տենդենցների մեջ, նրա զարգացման մեջ, ոեալիստական և ոռմանտիքական տենդենցների միասնությունը, խարակտերների հերոսականությունը, սոցիալիստական նպատակայնությունը: Ժողովրդայնության պրոբլեմը քննադատական ոեալիստական, հեղափոխական-ոռմանտիքական և սոցիալիստական ոեալիստական գրականության մեջ:

Հեղինակի վոճը, վորպես նրա ստեղծագործության առանձնահատկությունների միասնություն՝ դրսելորող նրա բոլոր յերկերում: Հեղինակի վոճի ուսումնասիրության անհրաժեշտությունը—նրա զարգացման և հակասությունների մեջ:

Գրական հոսանքը (ուղղությունը, գպրոցը, խմբավորումը), վորպես գաղափարական ուղղվածությամբ ու ստեղծագործական սկզբունքներով իրար մոտ՝ մի շաբաթ հեղինակների ստեղծագործությունների գաղափարական գեղարվեստական առանձնահատկությունների միասնություն: Մեթոդի, գրական հոսանքի և վոճի ըմբռնումների փոխհարաբերակցությունը:

11. Բանաստեղծական սեռերը լեզ տեսակները

Բանաստեղծական սեռերը՝ վիպերգություն, քնարերգություն, թարերգություն: Իրականության արտացոլման տարբեր ձևերը վիպերգության և քնարերգության մեջ: Տիպիքական պատկերները վիպերգության և տիպիքական վերապրումները քնարերգության մեջ: Լիրիզմի հնարավորությունը վիպերգության և եպիքականության հնարավորությունը քնարերգության մեջ: Դրամայի սինտետիկ բնույթը: Լիրիքական և լիրիկա-եպիքական տարբերի միասնությունը լիրիկա-եպիքական ժանրերում:

Բանաստեղծական սեռերը և նրանց մասնակի տեսակները։
Ժանրերի անկայունությունը, նրանց փոփոխությունները և
փոխադարձ կապը զբականության պատմության մեջ։ Ժանրերի
առաջացումը պատմական վորոշ պայմաններում և նրանց ձեւա-
փոխությունները տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր
հեղինակների մոտ։ Եպիքական ժանրեր՝ պոեմա, վեպ, վիպակ,
պատմվածք, ոչերկ, հովկերգություն, ատակ։ Դրամատիքական
ժանրեր՝ վոլերգություն, կատակերգություն, դրամա։ Լիրի-
քական ժանրեր՝ լիրիքական բանաստեղծություն, ներող,
յեղերերգություն, եպիգրամ և այլն։

Գ Բ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

I

1. Լ ե ն ի ն—ա) Հոդվածներ Տուստոյի մասին,
բ) «Գերցենի հիշատակին», XIV հատ.
գ) «Կուսակցական կազմակերպություն և կուսակ-
ցական զբականություն»։
2. Լ ո ւ ն ա չ ա ր ո կ ի—«Լենինը և զբականագիտությունը»։
3. «Մարքսը և Ենգելը արվեստի մասին»։
4. Պ լ ե խ ա ն ո վ—հոդվածները զբականության և արվեստի
մասին, V, VI, X, XIV հատորներ։
5. Բ ե լ ի ն ս կ ի յ—„Վзгляд на русскую литературу“, 1846
и 1847 г.г.

„О разделении поэзии на роды и виды“.

II.

1. Լ. И. Тимофеев— „Основы теории литературы“,
М. 1938 г.
2. Л. В. Томашевский— „Теория литературы“, 5-ое
издание, Л. 1930 г.
3. Потебня— „Из записок по теории словесности“.
4. Жирмунский— „Введение в метрику“.
5. Жирмунский— „Рифма, ее история и теория“.
6. Штокман— „Библиография работ по стихосложению“.
7. Тимофеев— „Теория стиха“.
8. Мышковская— „Работа Л. Толстого над произве-
дением“.
9. Нусинов— „Вековые образы“.
10. Гудзицкий— „Как работал Л. Толстой“.

ՄՐԱԳԻՐ ԳՐԱԲԱՐ ԼԵԶՎԻ

(80 ժամ)

Լեզվագրական շաբաթ ԿՈՒՐՍԻ ՀԱՄԱՐ

Քերականություն

Ծանոթություն գրաբարի հնչյունական կազմության, գրա-
բարի ուղղագրության և ընթերցանության կանոններին (4 ժ.)։
Հնչյունաբանություն.՝ Բաղաձայներ և ձայնավորներ—յերկ-
բարբառներ. բաղաձայնական սիստեմը (4 ժամ)։

Ցեարանություն.՝ Գրաբարի հոլովները. հոլովների հիմնական
ֆունկցիան. հոլովակազմիչներ. հոլովները կազմելու որենքները.՝
գրաբարի հոլովումը. հոլովիչները. պարզ և խառը տիպի հոլո-
վումներ։

Գրաբարի բոլոր հոլովումները (20 ժամ)։

Գրաբարի բայերը. խոնարհում. խոնարհիչներ. յեղանակներ,
կանոնավոր բայերի խոնարհումը բոլոր յեղանակներով (20 ժ.)։

Ընթացանություն

Կարդալ և թարգմանել՝

ա) Եղիշե.՝ Առաջին յեղանակ.

բ) » Յերկրորդ յեղանակ մինչև մոգերի նամակը
ներառյալ.

գ) Հատվածներ «Գրաբարի ինքնուսուցման ձեռնակ»-ից (32 ժ.)։

ՄՐԱԳԻՐ ԳՐԱԲԱՐ ԼԵԶՎԻ

ԼԵԶՎԱԳՐԱԿԱՆ Յ-ՐԴ ԿՈՒՐՍԻ ՀԱՄԱՐ

1. Նախդիրներ՝ ըստ, ընդ, առ, զ, ի, զկնի, վասն և այլն:
Նախդիրների հոլովակից գործածությունը և նշանակությունը
(10 ժամ):
2. Շաղկապներ (2 ժամ):
3. Զայնարկություններ (2 ժամ):
4. Գրաբարի շարահյուսությունը. նախադասության կառուցածքը գրաբարում. յենթակայի և ստորոգալի շարահյուսությունը և շարադասությունը. հատկացուցիչ, բացահայտիչ և վորոշիչ. գրանց շարադասությունը. խնդիրներ և պարագաներ. գրանց շարադասությունը. Գրաբարի բարդ նախադասությունները (20 ժ.):
5. Կրկնողություն հնչյունաբանության (2 ժ.):
6. Կրկնողություն ձևաբանության (10 ժ.):
7. Կրկնողություն շարահյուսության (4 ժ.):
8. Կարդալ և թարգմանել (50 ժ.):

Մոլուս Խորենացի՝

- ա) Հայկի և Բելի վեպը՝ զլիս. զլիս. թ, ժ, ժա, ժը.
- բ) Արայի և Շամիրամի վեպը՝ զլիս. զլիս. ժե, ժզ, ժէ, ժը, ժթ.
- շ) Արտաշեսի և Սաթենիկի վեպը՝ զլիս. զլիս. ւ լը, լթ, իս, խա, խք, խդ, խդ, խե, խզ, խթ, ժ.
- դ) Արշակավանի ավանդությունը՝ զլիս. զլիս. իս, իթ, լս.
- ե) Գրերի գյուտը՝ զլիս. զլիս. ծբ, ծզ.

ԳՐԱԲԱՐԻ ՄՐԱԳԻՐ

**Մանկ. ինստիտուտի պատմական բաժնի և կուրսի
(1938—1939 ուս. տ.) (160 ժամ)**

Ներածության

**Ծանոթություն գրաբարի ծագման և զարգացման ընթացքի
ժամկեցություն:**
Քերականություն

Ծանոթություն գրաբարի հնչյունական կազմության, ուղղագրության և ընթերցանության կանոններին:

Հնչյունաբանություն. — Բաղաձայներ և ձայնավորներ. յերկրաբաններ. բաղաձայնական սիստեմը:

Զերանություն. — Հոլովերը. Հոլովերի հիմնական փունկցիան. հոլովակազմիչներ. Հոլովիչներ. Հոլովումը: Պարզ և խառը տիպի հոլովումներ: Գրաբարի բոլոր հոլովումները:

Բայց. — Կանոնավոր և անկանոն բայերի խոնարհումը: Բայերի սեռը: Պակասավոր բայեր: Դերբայ: Նախդիրներ: Մակրայ: Շաղկապ և ձայնարկություն:

Ծարահյուսություն. — Նախադասության վերլուծություն: Համաձայնություն և շարադասություն:

Ընթերցանության

Կարդալ և թարգմանել՝

1. Հատվածներ «Գրաբարի ինքնուսուցման ձեռնարկ»-ից:
2. Եղիշե. — Ա. Յեղանակ.
3. Խորենացի. — Հայկի և Բելի, Արայի և Շամիրամի, Վահագնի առասպեկտները:

**Մանկ. ինստիտուտի պատմական բաժնի և կուրսի
(1938—1939 ուս. տ.) (20 ժամ)**

Քերականությունից կրկնել՝ հոլովումները և կանոնավոր բայերի խոնարհումը:

Հնիթերցանություն. — Կրկնել «Ինքնուսուցման ձեռնարկ»-ից անցած նյութերը և կարդալ Եղիշե. մատենագրից Այեղանակից 10 եջ:

ՄՐԱԳԻՐ ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ ՄԵԹՈՂԻԿԱՅԻ

Ներածություն (4 ժամ)

Համեկ(ը)կ կկ վորոշումները դպրոցի մասին և մայրենի լեզվի տեղն ու դրվածքը խորհրդային դպրոցում։ Մայրենի լեզվի առարկան և մեթոդիկան։ Մայրենի լեզվի հիմնական բաժինները։ Մայրենի լեզվի ծրագրերը և նրա կառուցման սկզբունքները։

1. Գրանահաջուրյուն ուսուցումը (6 ժամ)

Գրաճանաչության ուսուցման հոգեբանական հիմունքները։ Գրաճանաչության ուսուցման մեթոդիկան և նրա արժեքը մեթոդիկայի մյուս բաժինների համեմատությամբ։ պատմաքննական ակնարկ գրաճանաչության ուսուցման շուրջը։—անալիտիկ մեթոդներ, սինթետիկ մեթոդներ, անալիտիկ-սինթետիկ մեթոդներ։ Գրաճանաչության ուսուցման խորհրդային մեթոդը և նրա առավելությունները, ուսուցման ետապները։ Ուսուցման յուրաքանչյուր ետապի նպատակն ու բովանդակությունը։ Ուսուցման ոժանդակ նյութերը (դիբակտիկ նյութեր) և նրանց գործադրության պրիորները։ Գրաճանաչության ուսուցման դասերի պլանավորումը։ մեկ դասի պլանը։

Ուսանողների կողմից գրաճանաչության դասի պլան կազմելու գործնական աշխատանքներ։

2. Կարդալու մեթոդիկա (6 ժամ)

Կարդալու հոգեբանական և ընախոսական հիմունքները։ Կարդալու տեխնիկայի հիմնական հատկանիշները։ Կարդալու թերությունները։ այդ թերությունները վերացնելու պրիորները։ Կարդալու նախնական տեխնիկան զարգացնելու միջոցները։ վարժ և հասկանալով կարդալու տեխնիկայի մշակումը։ կարդալու դասի պլանը զանազան դասարաններում։ Կարդալու դասին նախապատրաստվելը։ սխալներն ուղղելու պրիորները։ բանավոր խոսքի մշակումը՝ կազմաձ կարդալու հետ։ Հոգվածի մշակում, բառապաշարի հարստացման աշխատանքներ։ հարցեր ըստ բովանդակության։ Հոգվածի բովանդակությունը պատմելու ուսուցումը։ հոգվածի լեզվական մշակումը։ հոգվածի իդեալական կողմի

մշակումը։ գրավորի թեման նախապատրաստելու աշխատանքները կարդալու դասին։ Քերականության դասի և կարդալու դասի փոխադարձ կազմը։ Բարձր կարդալը և լուս կարդալը։ խմբովին կարդալը։

Գրական ընթերցանությունը 5—7-րդ դասարաններում և նրա լովանգակությունը։ Գեղարվեստական ընթերցանություն հատկանիշները։ գեղարվեստական ընթերցանության նախապատրաստվելու պրիորները։ Գրական գեղարվեստական վերուժություն։ գեղարվեստական ընթերցանության ողտագործումը լեզու սովորեցնելու նպատակների համար։ աշակերտի վոճը մշակելու պրիորները։ Տնային ընթերցանության կազմակերպման մեթոդիկան։

Ուսանողների գործնական աշխատանքները կարդալու դասի որինակելի պլաններ կազմելու շուրջը։

3. Գրավոր խոսի ուսուցումը (10 ժամ)

Գրավորների տիպերը տարրական գպրոցում։ գրավորների տիպերը միջնակարգ գպրոցներում։ 1-ին և 2-րդ դասարանների գրավորների առանձնահատկությունը և այդ գրավորները մշակելու պրիորները։ գրավորներն ուղղելու յեղանակները 1-ին և 2-րդ դասարաններում։

3-րդ և 4-րդ դասարանների գրավորների տեսակները և մշակման պրիորները։ հացերի մեթոդը։ շարադրություն գրելու տարրական ձևերը։ շարադրություն գրելու նախապատրաստությունը։ փոխազրություններ և ինքնուրույն շարադրություններ։ ստեղծագործական շարադրություններ։ Գրավորներն ուղղելու պրիորները։ 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների գրավորները։ գրական ընթերցանության հետ կապված շարադրություններ։ պլան կազմելու ձևերը։ ցիտատներ հավաքելու ձևերը։ շարադրություններ։ համեմատական բնութագրություններ։ շարադրություններ մշակված թեմայի շուրջը։ շարադրություններ վերացական թեմայի շուրջը։ ստեղծագործական շարադրություններ։

Տնային գրավոր աշխատանքները, նրանց բնույթն ու նախապատրաստությունը։ Տիպիկ սխալները գրավորների մեջ։ սխալները կանխելու պրիորները։ սխալներն ուղղելու պրիորները։ Ուսանողների գործնական աշխատանքները 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների գրավորների վրա։

4. Քերականությունը լեկ ուղղագրության մերոդիկան (28 ժ.)

Քերականությունը վորպես զիտություն. համառոտ ակնարկ քերականության պատմության շուրջը: Քերականության փորմալիստական ուղղությունը և նրա իդեոլոգիական աղբյուրները. քերականական փորմալիզմի քննադատությունը. քերականության ավանդման մեթոդները, դոգմատիկ մեթոդը և նրա թերությունները. քերականության ուսուցման կոմբինացիոն մեթոդը:

Վարժությունները և նրանց դերը քերականության ուսուցման մեջ. քերականական ուսուցման դիդակտիկ նյութերը:

Հայոց լեզվի քերականության ծրագիրը միջնակարգ դպրուցում: Տարբական դպրոցի քերականության ծրագրի նյութի ծավալը և բաշխումն ըստ դասարանների. նյութի բաշխումն ըստ քառորդների. նախաքերականական զիտելիքները 1-ին և 2-րդ դասարաններում և այդ զիտելիքները հաղորդելու պրիոնները: Նախադասության ուսուցումը 3-րդ դասարանում. գոյականի և հոլովման ուսուցումը 3-րդ դասարանում. բառակազմության ուսուցումը 3-րդ դասարանում. բայի և խոնարհման ուսուցումը 4-րդ դասարանում. խոսքի մասերի ուսուցումը 4-րդ դասարանում. բարդ նախադասության ուսուցումը: Բառակազմության ուսուցումը:

Քերականական դասի պլանավորումը տարրական դպրոցում. քերականական դասի որինակելի պլան: Քերականական վերլուծությունները տարրական դպրոցում: Քերականության ծրագիրը 5—7 դասարաններում. նյութի բաշխումն ըստ քառորդների և ըստ ժամերի. քերականության դասի պլանը 5—7 դասարաններում, դասի նախադասարաստությունը. դասի ընթացքը. տնային աշխատանքներ քերականությունից:

Հնչյունաբանության ուսուցումը. ձևաբանության ուսուցումը 5-րդ դասարանում. ձևաբանության ուսուցումը 6-րդ դասարանում: Շարահյուսության ուսուցումը 6-րդ դասարանում, շարահյուսության ուսուցումը 7-րդ դասարանում. կետաղըության ուսուցումը: Քերականության վերլուծությունները միջնակարգ դպրոցում:

Քերականական վարժությունները և նրանց կատարման կարգը միջնակարգ դպրոցում:

Քերականական դասի պլանավորման գործնական աշխատանքները (ուսանողների համար):

Ուղղագրության ուսուցումը. գրության տեսակները. ուղղագրության պատմական և գիտական հիմունքները. ուղղագրական տիպիկ սխալները հայերենում. ավանդական և բարբառային տիպի սխալների հոգեբանական և բնախոսական հիմունքները. դանազան տիպի սխալները վերացնելու մեթոդները. սխալները կանխելու հիմնական պրիոնները, գրավոր աշխատանքների տեսակները. թելագրության կարևոր գերը ուղղագրության ուսուցման աշխատանքներում. թելագրության տեսակները. ուղղագրական սխալներն ուղղելու պրիոնները:

Ուղղագրական սխալները տիպավորելու գործնական աշխատանքներ (ուսանողների կողմից):

ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ ՄՐԱԳԻՐ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒՅՈՒՆ

Քերականությունը վորպես լեզվի զիտության մի մասը. Քերականության բաժինները՝ հնչյունաբանություն, ձևաբանություն և շարահյուսություն:

1. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոսելու որգանները և նրանց ֆունկցիան: Գրական լեզվի հնչյունական սխատեմը, հնչյուն և տառ. այբուբենը և նրա ծառակումը. բառ. վանկ և տողադարձ: Հնչյունափոխություն:

Բառը լեկ երա կազմությունը

Բառի ուղղակի: և փոխաբերական իմաստները. բառի նշանակության փոփոխությունն ըստ շարադասության և գործածության պայմանների (հասարակական, դասակարգային կեցության, կենցաղ և այլն): Նույնանիշ, հոմանիշ, համանուն բառեր:

Հասկացողություն բառի ձևույթների մասին — արմատ և ածանց, հիմք և վերջավորություն:

Բառակազմության յեղանակները՝ պարզ, բարդ, ածանցավոր և բարդ ածանցավոր բառեր: Խսկական և անխսկական բարդություններ. հարագիրներ և կցական բարդություններ. հոդակապ անհոգակապ բարդություններ:

Նոր բառեր կազմելու յեղանակները.

ա) Բառի իմաստների փոփոխություն, վորը տեղի յեւ ունենում հասարակական կյանքի փոփոխության հետևանքով (բաց, ճեղքվացք, վարժապետ, պարոն):

բ) Հայերեն արմատների և ածանցների ողնությամբ (գերակատարել յելութ, հարվածային, հանույթ . . .):

գ) Բարդ բառեր կազմելու սովորական յեղանակով (կատարածու, հանքանյութ, բանուժ):

դ) Նորագույն հապավումների յեղանակով:

Ուղղագրություն

Ը—ձայնավորի ուղղագրությունը:

այ, ոյ, յա, յո, յու, իա, իո, իու, իե յերկնչյունների ուղղագրությունը:

Յ—ձայնակապը և նրա ուղղագրությունը:

2. ԶԵԿԱԲԱՆՈՒԹՈՒՆ

Խոսքի մասեր

Բառերի քերականական կլասիֆիկացիան (ըստ նրանց իմաստի, նախադասության մեջ ունեցած գերի, բառերի հետ ունեցած կապակցության ձևի): Նախադասության անդամ դարձող խոսքի մասեր (թանձրացական իմաստ ունեցող), նախադասության անդամներ կապող (ձևական իմաստ ունեցող) խոսքի մասեր, նախադասությունից դուրս գտնվող խոսքի մասեր (ձայնարկություն):

ԲԱՅ

Բայի գործածությունը նախադասության մեջ վորպես ստուրողյալ յենթակա և լրացում, պարզ և բաղադրյալ ստորոգյալ:

Բայի բաժանումն ըստ յերկու հիմնական ձևի՝ գերբայական և յեղանակային:

Ա. Բայի դերբայական ձեվերը կամ դերբայներ

Դերբայների իմաստն ու գործածությունը խոսքի մեջ: Բայական և գոյական հատկությունների համատեղումն անորոշ գերբայի մեջ: Անորոշ գերբայի վերջավորությունը և խոնարհումը: Ածական և բայական հատկությունների համատեղումը հարակատար և յենթակայական գերբայների մեջ: Անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար և ըղձական գերբայների գերը խոնարհման մեջ:

Դերբայների վերածումը գոյականի և ածականի (հողված, գրող . . .):

Բ. Բայի յեղանակային ձեվը

Սահմանական, հրամայական, ըղձական, յենթագրական և հարկադրական յեղանակները, սրանց կազմությունը, ժամանակ-

ները, ուղղագրությունը: Դեմք և թիվ: Բայի սեռերը՝ ներգործական, կրավորական, չեղոք: Բայերի կազմությունը և կերպերը: Կերպավորող ածանցներ (անց, ոցն, ցն, վ, ստ, ոտ, կոտ և այլն):

Բայերի խոնարհման բոլոր ձևերը. անկանոն բայերի խոնարհումը—(լալ, գալ, տալ, լինել ուտել, դառնալ . . .): Պակասավոր բայերի խոնարհումը (զիտենալ, կենալ, ցանկանալ, հուսալ):

Հավելավոր բայերի խոնարհումը՝ (եմ, կամ, կարող եմ, արժեմ):—Արգելական հրամայականը:

Գ Ո Յ Ա Կ Ա Ր

Գոյականի գործածությունն իբրև յենթակա, կոչական բառ, ստորոգյալ և լրացում: Թիվը և հողվումը: Հոլովակերը, սրանց իմաստային և կիրառական նշանակությունը: Հոլովիչները (ի, ու, ան, յան, ոջ, որ, վա, ց): Գրաբար հոլովածերի մնացորդներ: Հողեր: Գոյականակերտ հոլովակ:

Ա Ճ Տ Կ Ա Ր

Ածականը վորպես հատկություն և վերաբերություն ցույց տվող բառ: Ածականների գործածությունը նախադասության մեջ: Վորակական և հարաբերական ածականներ. Համեմատական աստիճանները: Ածականի գործածությունը գոյականի հետ: Ածականների փոխանցումները գոյականի և ընդհակառակը: Ածականներտ ածանցներ:

Թ Վ Ա Կ Ա Ր

Թվականը վորպես առարկայի քանակ և կարգ ցույց տվող բառ: Թվականի գործածությունը նախադասության մեջ: Տեսակները: Թվականների ուղղագրությունը: Դասական թվականների գրակոր արտահայտության յերեք ձև—հոռմեական, արաբական թվանշաններով և հայերեն տառերով: Թվականի գործածությունը գոյականի հետ:

Դ Ե Ր Ա Կ Ա Ր

Դերանունները վորպես փոխարինող բառեր: Դերանունների գործածությունը նախադասության մեջ: Դերանունների տեսակներն ըստ իմաստի՝ անձնական, ցուցական, ստացական, փոխադարձ, հարցական, հարաբերական, անորոշ, վորոշյալ և ժիտական: Դերանունների հոլովումը: Ուղղագրությունը:

Մ Ա Կ Բ Ա Ր

Մակրայը վորպես ածականից տարրեր խոսքի մաս թե իր ձևով և թե իր փունկցիայով: Մակրայների տեսակներն ըստ իմաստի՝

տեղ, ժամանակ, քանակ, ձև ցույց տվող մակրայներ։ Մակրայն ների գործածությունը նախադասության մեջ՝ վորպես ստորոգյալի լրացումներ։ Մի շարք մակրայների ծագումը գրաբարի թեքման ձևերից։

Կ ա պ

Կապերի սահմանումը. կապերի գործածությունը նախադասության մեջ։ Նախադրություններ և յետադրություններ։ Իսկական և անխսկական կապեր. կապական բառեր. նախադրությունների և յետադրությունների ծագումը։ Գրաբարյան հոլովաձերից ստացված կապեր։

Շ ա դ կ ա պ

Շաղկապը և նրա գործածությունը նախադասության մեջ։ Համադասական և ստորադասական շաղկապներ. պարզ և բաղադրյալ շաղկապներ։ Ուղղագրությունը։

Զ ա յ ն ա ր կ ո ւ թյուն

Զայնարկությունը և նրա առանձնահատկությունը խոսքի մյուս մասերից (եմոցինալ բնույթ)։

Կետադրություն։

Նախադասությունների վերլուծությունը ըստ խոսքի մասերի։

3. ՇԱՐԱՀՅՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ

Ա. Պարզ նախադասության շարահյուսություն

1. Մտածություն և լեզու. մտածություն և խոսք. խոսքի տեսակները՝ նախադասություն, ճառ, յերկ, հրաման, կոչ և այլն։

2. Նախադասությունը և նրա հիմնական հատկանիշները (արտահայտում ե մի ամբողջական միտք, խոսքի միտորն ե և այլն)։

3. Նախադասության տեսակներն ըստ կազմության—պարզ և բարդ—Յենթակա և ստորոգյալ։ Դրանց միասնությունն ու հակադրությունը։ Յենթակայի և ստորոգյալի լրացումները։ Հողովաքերի կիրառությունը, նրանց փունկցիան, վորոշիչ հոդի գերը վորպես մորֆոլոգիական կատեգորիա հոլովման ժամանակ (վորոշյալ և անորոշ առումներով—անձ և առարկա ցույց տալու ժամանակ)։

4. Նախադասության տեսակներն ըստ յերանգի՝ հարցական բացականչական կամ կոչական (գիմողական) և պատմողական։ Նախադասության տեսակներն ըստ բնույթի՝ հաստատական և ժխտական։ Միջանկյալ բառերով, կոչականով և ձայնարկություններով նախադասություններ, համադաս լրացումներով նախադասություններ։ Կետադրությունը։ Թերի նախադասություն, անորոշ

գերբայով կազմած նախադասություն։ Ինտոնացիան, պառուզան և նրանց արժեքը նախադասության միտքը ճշտելու համար. վոճական վարժություններ։

Բ. Բարդ նախադասության կառուցվածք

1. Պարզ և բարդ նախադասության հարաբերությունը։ Բարդ նախադասության կառուցվածքը, տեսակները՝ միավորյալ համադասական և ստորադասական։ Համադաս շաղկապների գործածությունը միավորյալ և համադասական նախադասությունների մեջ։ Բարդ նախադասության մասերի դասավորությունը։ Կետադրություն։

2. Բարդ ստորադասական նախադասության կառուցվածքը։ Դվարավոր և յերկրորդական նախադասություններ։

3. Ստորադասական նախադասության տեսակները։ Խառը տիպի նախադասություններ։ Զեղջված յենթակայով, զեղջված ստորոգյալով նախադասություններ։ Ուղղակի խոսքով, միջանկյալ նախադասությունով նախադասություններ։ Դերբայական լրացումներ։ Կողմնակի յենթակա։ Նախադասությունների հոլովակից գործածությունները (գեղի տուն, իմ շնորհիվ)։

Շարադասություն

Գաղափար շարադասության մասին։ Սովորական շարադասություն։ Մրջուն շարադասություն։ Կետադրություն։

Գ. Ընթերցանություն յեվ գրենվ աշխատանք

Մահուն, գեղեցիկ, արտահայտիչ ընթերցանություն։ Գրքով աշխատելու յեղանակները (ընդգծումներ, դիտողություններ լուսանցքներում, պլան կազմել, ցիտատ հավաքել)։

Դ. Գրավոր յեվ բանավոր խոսք

Շարադրություն աղատ թեմայով. շարադրություն առաջադրած թեմայով։ Ուղղագրական և քերականական վարժություններ։ Թելագրություն։

Կանոնավոր գրական լեզվով խոսելու և պատմելու հմտություն. բարբառայնության հետքերի վերացման աշխատանքներ. գեղեցիկ վոճական պրիորների ոգտագործում խոսելու ժամանակ։ Բառապաշարի հարստացում, թե հին և թե նոր բառերով։

Ա. Ղարիբյանի և Գ. Սեակի քերականության գրքերը 1938 թ.
հրատ.՝
Իններորդ տարվա քրեստոմատիա. 1938 թ. հրատ.՝

1. ՀԱՅՈՑ ԼԵՂՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Լեղվի բնորոշումը բուրժուական լեզվաբանության մեջ։ Լեղվի բնորոշումը մարքսիզմի կլասիկների մոտ։ Բուրժուական լեզվաբանության գրույթները լեղվի պատմության շուրջը։ Մարքսիստական լեզվաբանության գրույթները նույն խնդրի շուրջը։ Լեղվի դասակարգայնության խնդիրը։ Լեղվի պատմության կազմը հասարակության պատմության հետ։ Մարքսիզմի կլասիկների առույթները լեղվի պատմության շուրջը։ «Լեղվի նոր ուսմունքը» և նրա նվաճումների ոգտագործումը լեղվի պատմություն կառուցելու խնդրում։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- Ֆ. Ենգելս.—Աշխատանքի դերը կապկի մարդ դառնալու մեջ։
- Մարկս, Էնգելս, Լենին, Ստալին օ проблемах языка и мышления, изд. ГАИМК.
- Н. Я. Марр.—„Язык и мышление“.

Հայոց լեզվաբանության պատմություն

Հայ պատմագիրները լեղվի մասին։ Հայոց լեղվի պատմության նվիրված առաջին լուրջ աշխատությունը „Tesaurus linguae armeniacae“ (Գանձ Արամյան լեղվի)։ Շրողերի «զիտական լեզվաբանության» ներկայացուցիչները և նրանց աշխատանքները հայոց լեղվի մասին։ Մյուլեր, Լադարդ, Հյուրշման, Մեյիե, Կարստ։ Յակ. Մառը և նրա հայագիտական աշխատանքները։ Հայոց լեղվի պատմության հիմնական հտապները։

Գրաբար լեզու

(Հայ հին ֆեոդալական հասարակության գրական լեզու):

Գրաբար լեղվի ծագման պրոբլեմը և յեղած տեսակետներն այդ մասին։ Ն. Մատի տեսակետը. գրաբարն իրեւ հայ ֆեոդալականության խոսակցական լեզու. մատենագրական տեղեկություններ այդ մասին։

Գրաբարի գրական լեզու գառնալու սոցիալ-քաղաքական պատճառները։ Հայ գրերի գյուտը. առաջին թարգմանությունը. «Վոսկեղաբյան» և «Արծաթէ գարի» հայերեն գրաբար լեզվի կազմությունը. գրաբարի հաջունական կազմությունը և ստաղիան։ գրաբարի յերկարաբառները. համեմատություն ժամանակակից գրական լեզվի և բարբառների հետ. գրաբարի հոլովերը և հոլովական սիստեմը՝ հոլովակազմիչներ, հոլովիչներ և հոլովում. թեքականությունը հոլովումների մեջ (ներքին և արտաքին):

Հոգնակիների կազմությունը գրաբարում և նրանց լեզվաբանական արժեքը. գրաբարի ածականները, թվականները և նրանց հոլովումը. համեմատություն գոյականների հետ. գրաբարի գերանունների հոլովումը։

Դերանունների հոլովման յերկու տիպը. գերանվանական հոլովման մնացորդները գրաբարում իրեւ մնացորդ գրաբարի նախորդ լեզուների հարեթական ստաղիայիր. Բայեր, գերբայներ, յեղանակներ և ժամանակներ. գրաբարի բայերի խոնարհումը. գերանվանական խոնարհման հետքերը։

Գրաբարի խոնարհումների ծագումը. անորոշ և յենթակայական գերբայի ծագումը։ Նախաղասության կառուցվածքը գրաբարում. գրաբարի նախաղորդությունները։

Գրաբարի բառապաշարը. սեմանտիկական բները գրաբարում, գրաբարի բառարմատները. Ընդհանրություն ասորերենի, պարսկերենի, կովկասյան լեզուների և արաբերենի հետ. Փոխառություններ հունարենից, փոխառություններ հոսմեյականից. հունարան դպրոցը և նրա մատուցած ծառայությունները հայերենին. փոխառություններ արաբերենից։

Գրաբարի գագարելը խոսակցական լեզու լինելուց. գրաբարն իրեւ ծեսի, պաշտամունքի և պատմագրության լեզու 11—19-րդ դարերում։ Գրաբար լեղվի անկումը 15—18-րդ դարերում։

Միիթաբյանները և գրաբարի վերակենդանացման փորձերը։

Միջին հայերեն

(Հայ միջին շրջանի ֆեոդալական հասարակության գրական լեզուն):

Կիլիկյան պետականության կազմակերպումը. նոր գրական լեղվի պահանջը. մատենագրական վկայություններ այդ մասին. նոր կուլտուրա և նոր լեզու՝ միջին հայերեն, միջին հայերենով գրված յերկեր. միջին հայերենի կազմությունը. միջին հայերենի հաջունական սիստեմը, ձեաբանությունը և բառապաշարը։

Դեմոկրատական-աշխատավորական լեզուն միջին հայերենում:
Միջնադարյան գեմոկրատական տաղերգուների բանաստեղծության լեզուն: Կիլիկյան պետության հարաբերությունը յեփռական պետությունների հետ:

Միջին հայերենի փոխառությունները արաբական և յեփռական պետությունների լեզուներից. միջին հայերենին հատուկ բառերը, միջին հայերենի ուղղագրությունը. միջին հայերենի համեմատությունը հայ բարբառների, գրաբարի և ժամանակակից գրական հայերենի հետ:

Աչսարհաբար հայերեն

(Հայ բուրժուական հասարակության ժամանակաշրջանի գրական լեզուն):

Հայ բուրժուական հասարակության կազմավորումը 19-րդ դարում:

Ազգային լեզվի պահանջը. այդ լեզվի ստեղծումը և նրա ստեղծման սոցիալ-դասակարգային պատճառները. Աշխարհաբար գրական լեզվի զոյացման ճանապարհները. հնագույն հետքեր. աշխ. գրական հայերենի կազմության աղբյուրները. գրական լեզվի ողտագործումը բուրժուական հասարակության տարրեր դասակարգերի կողմից:

Գրական հայերենի հնչյունական սիստեմը. բաղաձայներ, ձայնափորներ, յերկրաբառների բացակայությունը. գրական լեզվի ուղղախոսությունը և ուղղագրությունը. գրության և արտասահմանապատասխանությունը. գրական լեզվի հոլովները. հոլովման սիստեմը և հոլովումը. համեմատություն գրաբարի հետ. գրաբարյան վերապրումները հոլովական սիստեմում:

Կցականությունն աշխարհաբար գրականի մեջ իրեն սիստեմ. աշխարհաբարի ածականներն ու թվականները. աշխարհաբարի գերանունները. աշխարհաբար գրականի բայերի խոնարհումները և խոնարհման կցական սիստեմը. համեմատություն գրաբարի հետ. սեռերն ու կերպերն աշխարհաբար գրականի մեջ. խոնարհման անկանոնություններ. աշխարհաբարի կապերն ու նրանց առանձնահատկությունը. աշխարհաբարի մակրայների կազմությունը և ծագումը. գրաբարյան ձեռքի վերապրումները խոսքի մասերի մեջ. աշխարհաբար գրականի շարահյուսական սիստեմը. համեմատություն գրաբարի հետ. աշխարհաբար գրականի քերականական սիստեմը և բարբառները. ընդհանրություններ և տար-

բերություններ. աշխարհաբար գրականի բառապաշարը և փոփոխությունները:

Արևմտահայ գրական լեզուն և նրա կազմությունը:

Արևմտահայ գրական լեզվի սիստեմ ու վերլուծությունը:

Գրական հայերենի գարգացման նոր ետապը

(Սոցիալիզմի դարաշրջանի հայ գրական լեզուն):

Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում. Խորհրդակին իշխանության հաստատումը Հայաստանում:

Սոցիալիզմի կառուցումը Խորհրդային Միության մեջ և Հայաստանում. Կուլտուրական հեղափոխությունը և Լենին-Ստալինյան ազգային քաղաքականությունը. ձեռվ ազգային և բռվանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի հսկա վերելքը, դպրոցական ցանցի անսահման լայնացումը, անզրագիտության վերացումը. սոցիալիստական արդյունաբերության անսախընթաց հսկա աճումը. շահազործական դասակարգերի վերացումը. բանվոր դասակարգի և զյուղացիության միջի սահմանագծերի վերացման պրոցեսը. Ստալինյան Սահմանադրությունն իրրե այդ բոլոր նվաճումների մարմնացում. ազգային լեզվի վերափոխման, վերակերտման պրոցեսը (բովանդակությամբ և մասամբ ձեռվ). հայերենը իրրե պետական լեզու, գիտության, տեխնիկայի, սոցիալիստական դյուղատնտեսության և արդյունաբերության լեզու:

Փոփոխություններ բառապաշարի մեջ. նոր բառերի ստեղծում. բառակազմական հին յեղանակների ողտագործում. բառակազմական նոր յեղանակների ստեղծում. փոփոխություններ ձեռբանության մեջ. փոփոխություններ շարահյուսության մեջ. մամուլի լեզու և գեղարվեստական գրականության լեզու. սոցիալիստական հայարակության գրական լեզվի զարգացման հեռանկարները:

Ի. Ստալին ԽՍՀՄ Սահմանադրության մասին, 1937թ.

2. ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԻՑ

ՆԵՐԱՋՈՒՐՅՈՒՅԻ

Բարբառագիտությունը վորպես գիտություն, նրա արժեքն ու նշանակությունը լեզվաբանության մեջ. բարբառագիտության նշանակությունը մայրենի լեզվին տիրապետելու աշխատանքներում:

ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Բարբառների ծագման հնդեվրոպական տեսությունը. վերջինիս կապը բուրժուական լեզվաբանության տեսության հետ:

Յ. Ենգելսը բարբառների մասին: Բարբառները իրեւ սոցիալ-քաղաքական յերեւյթներ. բարբառները—ժողովրդական «լեզուներ»:

Հայերենի բարբառների մասին յեղած տեսությունները: Ն. Յակ. Մասի տեսությունը հայ բարբառների մասին: Հնագույն տեղեկություններ հայ բարբառների մասին (8-րդ դ.): Հայ բարբառները վորպես նախկին տոհմացեղական լեզուներ: Հայ բարբառների գոյացման պրոցեսը:

Հայ բարբառագիտության պատմությունը. Շրոգերը հայ բարբառների մասին. Շահեն Զրպետ Յեղովիացու քերականությունը և տեղեկություններ հայ բարբառների մասին: Այտընյանի ուսումնասիրությունները և հայ բարբառների առաջին դասակարգումը. Հանուշի, Տոմանի, Մելիք Ս. Դավիթ Բեկի և լ. Մըսերյանի բարբառագիտական աշխատանքները: Շանոթություն բարբառագրության պրիմներին:

Օ. Խմբի բարբառների ուսումնասիրությունը

1. Յերեվանի բարբառ

Յերևանի բարբառի հնչյունական կազմությունը: Յերևանի բարբառի գոյականների հոլովումը, ածականներն ու թվականները. գերանունները. խոնարհման առանձնահատկությունները. համեմատություն գրական լեզվի հետ:

Յերևանի բարբառի յենթաբարբառները:

2. Ծանոթություն Հաւարիսանի բարբառի հետ:

3. Ծանոթություն Զուղայի բարբառի հետ:

4. Թբիլիսի բարբառ

Թբիլիսի բարբառի հնչյունական կազմությունը. Թբիլիսի բարբառի հոլովումը. հոգնակի հոլովումը. Թբիլիսի բարբառի գերանունները. խոնարհման առանձնահատկությունները. Համեմատություն Յերևանի բարբառի և գրական լեզվի հետ:

5. Ղարաբաղի բարբառ

Ղարաբաղի բարբառի հնչյունական կազմությունը. բաղաձայնական և ձայնագորական սիստեմը. Ղարաբաղի բարբառում.

Հոլովում. բայցառական հոլովը. սեռական հոգ. գերանունների հոլովումը. բայերի խոնարհումը:

Ղարաբաղի բարբառի խոնարհման ժամանակների արտասովոր հարստությունը: Ղարաբաղի բարբառի յենթաբարբառները:

6. Ծանոթություն Նամախու բարբառի հետ

Բ Խմբին պատկանող բարբառներ. Երանց խմբավորումն ըստ բաղաձայնական սիստեմի յեվ Երանց ընդհանուր գծերը:

1. Կարենո բարբառ. (Լենինական, Ախալքալակ, Ախալցիս):

Կարնո բարբառի հնչյունական սիստեմը. հնչյունական տարբերություններ գրաբարի համեմատությամբ. գոյականների հոգնակին. գոյականների և գերանունների հոլովումը կարնո բարբառում. բայերի խոնարհումը:

Կարնո բարբառի յենթաբարբառները:

2. Ծանոթություն Մշո բարբառին:

3. Պոլսի բարբառ:

Պոլսի բարբառի հնչյունական կազմությունը. Պոլսի բարբառի արտասանությունը. հոգնակի նշանները. Պոլսի բարբառում. հոլովների թիվը. յեղակի հոլովում. ի հոլովման գերակշռությունը. հոգնակի հոլովման առանձնահատկությունը. գերանունների հոլովում. բայերի խոնարհումը. բայերի սիստեմը: Հարունակական ժամանակները:

Պոլսի բարբառը և արևմտահայ գրական լեզուն:

4. Վանի բարբառ:

Վանի բարբառի հնչյունական կազմությունը և կազմության առանձնահատկությունները: Վանի բարբառի հոլովները. յեղակի և հոգնակի հոլովում. նմանություններ և տարբերություններ գրաբարի համեմատությամբ. Վանի բարբառի տարբերությունը Բ խմբից: Նմանություն Ա. և Գ խմբի բարբառների հետ: Վանի բարբառի յենթաբարբառները:

5. Համառոտ ծանոթություն Բ խմբին պատկանող մյուս բարբառներին:

Գ Խմբին պատկանող բարբառների ուսումնասիրությունը

1. Գ Խմբին պատկանող բարբառները յեվ Երանց ընդհանուր գծերը:

2. Ուրմիայի բարբառ

Ուրմիայի բարբառի հնչյունական սիստեմը. հոգնակիների կազմությունը. հոլովում. համեմատություն մյուս խմբերի բար-

բառների հետ. դերանունները և նրանց հոլովումը. բայերի խո-
նարիումը. սահմանական յեղանակի բաղադրյալ անցյալ ժամա-
նակների կազմության առանձնահատկությունները. Համեմա-
տություն Տրապիզոնի և Արքութիսի բարբառների հետ. վորոշող
և դիմորոշ հոգերն այդ բարբառում. բարբառի կրած ազգեցու-
թյունները:

Ընդհանուր դիտողություններ բարբառների բառապաշտի և
փոխառությունների մասին:

Ա Դ Բ Յ Ո Ւ Ն Ե Ր

Ф. Э н г е л ь с.—Франкский диалект. 1935.

И. С т а л и н.—Нац. колониальный вопрос.

И. С т а л и н.—Доклад на XVI партсъезде и заключи-
тельный слово.

Н. Я. М а р р.—Избранные работы, т. IV-



Խաբար Գ. ԱՆՏՈՆՅԱՆ

Сдано в набор 13/III 1940 г.

Подписано к печати 4/IX 1940 г.

4^{3/4} печ. лист. 223.528 тип. знак. 5^{1/2} авт. л. Формат 60×84^{1/16}

ФГ—7065.

Баказ 570.

Тираж 800.

Типография „Красный Восток“, Баку ул. Пионера, 84.

«Ազգային գրադարան



NL0225735

ԳՐԱՆ Ե Յ Ո. 10 Կ.

46. 647

Азербайджанский Педагогический Институт
им. В. И. Ленина

ПРОГРАММЫ
ПО ЛИТЕРАТУРНОМУ ФАКУЛЬТЕТУ

◆
Издание
Наркомпроса Азербайджанской ССР
Баку — 1940